# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՏԵԽՆՈ ՍԻԹԻ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի |
|---|---|
| | տեխնիկական բնութագիրը |
| 1 | "Նստարաններ. Նստարան՝ Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով: Նստարանը պատրաստված կլինի առնվազն 2000x900մմ չափերի:Մետաղական հիմնակմախքը պետք է պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /40x40x3մմ/ նստարանի 2 կողամասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրություն՝ 630մմ:Մետաղյա կողամասերի ոտքերի ստորին մասում եռակցված 3մմ հաստությամբ առնվազն 70x70մմ չափերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ 2 մետաղական կողամասերին եռակցված 2 հատ 30x30x1.5 մմ չափերի քառակուսի կտրվածքով խողովակ: Մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար եռակցված պողպատյա անկյունակներ՝ առնվազն 40x40x4մմ չափերի 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե անկյունակներ 40x40x4մմ չափերի առնվազն 300մմ երկարության:Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ, տեղադրված 30x20x1.5մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքով մետաղական խողովակ՝ եռակցված հիմնակմախքին, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով /բոլտ ու գայկա/ ամրացված: Նստարանի հենակին /4հատ/ և նստատեղին /6հատ/ 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով ամրացված 1900x60x40մմ չափերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված: Մետաղական մասերը՝ երկշերտ ներկված /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/: Փայտյա մասերը լաքապատված հաճարի գույնը մգեցնող լաքով:Թիկնակի |

| | |
|---|---|
| | վերին փայտյա մասի վրա, լազերային փորգրությամբ, փորագրված լինի §Մալաթիա-Սեբաստիա¦: Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով, մատակարարի միջոցներով: Նստարանի մետաղական հիմնակմախքի պատրաստումը /կորոգումները/ իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համապատասխան: Նշված աշխատանքները պետք է իրականացվեն պատվիրատուի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա: * Նստարանների պատրաստումը իրակականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան: *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված * Մասնակցի կողմից ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտություն չկա" |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՏԵԽՆՈ ՍԻԹԻ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |